ԵՍ ԳԵՐԱԴԱՍՈՒՄ ԵՄ ՍԽԱԼՎԵԼ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀԵՏ

Հայ ազգը 2-րդ տարին է արդեն, մի կոկորդ դարձած խռխռացնում է, որ արտաքերի մի հատիկ բառ՝ ազատություն, բայց դեռ չի հասկացվում բուն ասելիքը:

Հայ ժողովուրդը այնքան սիրեց խաչված Հիսուսը, որ խաչն առած շալակը տատասկների միջով ԳՆՈՒՄ ԷՐ դեպի իր գողգոթան: Եթե չլինեին մի քանի խիզախներ, որոնք 1988թ. մայիսի 28-ին արթնացրին ազգը 70 ամյա թմբիրից և սասանեցին կոմունիստ ղեկավարներին, հայտնի չէ, թե

ԱԻՄ-ի ,,Ինքնորոշում,, թերթ, 10 հուլիսի, 1989թ., հ.6, էջ 7

ե՞րբ կպատռվեր կեղծ պատմության դիմակը: Շնորհիվ նրանց է, որ այս տարի պետական մակարդակով նշվեց Հայաստանի անկախ հանրապետության 71-րդ տարեդարձը, այն դեպքում, երբ անցյալ տարի դա հրաշք էր համարվում:

Հայաստանի իշխանությունները քամելյոնի նման շատ արագ փոխեցին իրենց գույնը, չնայած որ դեռ հստակ չէ ժողովրդի ձայնը: Բայց նրանք զգալով ժողովրդի մեջ խմորվող տրամադրությունը սկսեցին զիջումներ անել՝ ոչ միայն իշխանությունների կողմից ճանաչվեց եռագույն դրոշն ու մայիսի 28-ը, այլ նաև բանտից ազատ արձակվեցին շատ-շատերը, այդ թվում և Մ.Գորգիսյանը՝ այն փոքրաթիվ խիզախներից մեկը, որ ձայն բարձրացրեց ու պահանջեց անկախություն:

Հիմա ոմանք կասեն փոքրաթիվը դա դեռ բոլորի ձայնը չէ: Ցիցերոնը կասեր՝ ,,ես գերադասում եմ սխալվել Պլատոնի հետ,,: Մենք էլ գերադասում ենք սխալվել Գարեգին Նժդեհի ու մյուս հայ հերոսների հետ, քան իրավացի լինել բոլշևիկների հետ: Բացի այդ չմոռանանք, որ բոլոր վեհ նպատակները կատարել են այն մարդիկ, որոնց զգացմունքները առաջ են անցել մտքից: Բայց բոլշևիզմի մահակը բթացրել է մեր մեջ թե միտք, թե զգացմունք: Իսկ մեր խիզախները այնքան քարի են գտնվում, որ ասպարեզը զիջում են ամեն տեսակ զազրախոսների, որոնք ջանք չեն խնայում մարդկանց մոլորեցնել, և արդյունքում ստացվում է մեր այսօրվա դառը իրականությունը:

Ոմանք հաճախ պնդում են, թե ժողովուրդը պատրաստ չէ, անկախության գաղափարը դեռ չի հասունացել, իսկ դուք, բարեկամ, ի՞նչ եք անում հասունացնելու համար, թե՞ կարծում եք, որ մի քանի իրավազուրկ սերունդներ պիտի անընդհատ Արցախ պահանջեն, աղաղակեն: Դայն բարբառո հանապատի:

ԽՍՀՄ երևսփոխանների համագումարի ընթացքին հետևողների մոտ այլևս տարակուսանք չմնաց, որ մեր երեսփոխանները թշվառ ու ողորմելի կացության մեջ են և ի զորու չեն ետ առնելու անօրեն կերպով մեզանից խլված Արցախը: Անկախ Հայաստանի կառավարությունը միայն կարող է միջազգային առյաններին հայց հարուցել ու հետ առնել ոչ միայն հայերով բնակեցված Արցախը, այլ Նախիջևանն ու մնացյալ ողջ մեր կորսված հողերը ևս:

Ուրեմն մեր նպատակը պիտի լինի առաջին հերթին ձեռք բերել անկախություն:

ԱՇՈՏ ՄԵՅՐՈՅԱՆ

ԱԵՄ-ի ,,Ինքնապաշտպանում,, թերթ, 10 հուլիսի, 1989թ., հ.6, էջ 8